Ն.Մ.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով և օրհնությամբ ողջունում ենք համայն մեր ժողովրդին և շնորհավորում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առիթով:

Սահմանադրության ընդունման պատմական իրողությունը խորհուրդ է այլևս, որը խտացնում է մեր ժողովրդի ազատության ու հայրենյաց սերը, ազգային պետականությունը վերագտնելու դարավոր երազը և այն մարմնավորված տեսնելու երջանկությունը՝ իբրև Աստվածային օրհնություն:

Սահմանադրությունը օրինահարգության մեր ձգտումն է, որպեսզի մեր հինավուրց հողում արդարության և իրավունքի պաշտպանությամբ ծաղկի խաղաղ կյանքը, և մեր զավակները միշտ վստահությամբ ու լավատեսությամբ նայեն գալիքին: Արդ, սիրելի հայորդիք, զորանանք այս տոնական օրվա սրբազան խորհրդով և ողջունենք մեր հանապազօրը, քանզի շնորհընկալ ենք հայոց ազատ երկնքին նայելու: Հավատավոր հոգով ջանանք ու գործենք ի սեր ազատ ու անկախ Հայաստանի անշրջելի առաջգնացության ու բարօրության:

Թող Բարձրյալն Աստված օրհնի հայրենակերտումի մեր ճանապարհը, մեր պարտքի մեջ զորացնի մեզ բոլորիս և ի բարին առաջնորդի մեր ընթացքը:

Սէր եւ խաղաղութիւն Աստուծոյ եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեանն. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
4 հուլիսի 2003 թ.